

# **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 1696-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի վերակազմավորելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 954-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 1696-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
  - 7-րդ, 9-րդ, 10-րդ կետերում, N 2 և N 4 հավելվածների վերնագրում «Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության» բառերը հանել,
  - 10-րդ կետում «վեցամսյա ժամկետում» բառերը փոխարինել «մինչև 2019 թվականի դեկտեմբերի 1-ը» բառերով: